



Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊՐՈՖ.-ԴՈԿՏՈՐ Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱԳԱՂԱԹՅԱ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐԸ



ովսես խորենացու «Պատմութիւն Հայոց»ը մեզ հասել է ավելի քան հիսուն ձեռագրերով, որոնք ցրված են աշխար-

հի տարբեր մատենադարաններում և թանգարաններում: Ձեռագրերից կեսից քիչ պակաս, թվով 24 ընդօրինակություն, Հայկական ՍՍՌ Մատենադարանի սեփականություն են կուզում: Մյուս ձեռագրերից վեցը գտնվում են Վենետիկի Մխիթարյան մատենադարանում, հինգը՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանում, մեկը՝ Ենայի Համալսարանի գրադարանում, մեկը՝ Վիեննայի Մխիթարյանց մատենադարանում, մեկը՝ Տյուբինգենի Համալսարանի գրադարանում, երկուսը ժամանակին գտնվել են Արմաշի մատենադարանում, մեկը՝ Սեբաստիայի Ս. Նշան վանքում, մեկը՝ Արդնի Բարձրահայաց Ս. Աստվածածնի վանքի մատենադարանում և այլն: (Առաջին Համաշխարհային պատերազմի արյունոտ օրերին թե ի՛նչ են եղել Արմաշի և Արևմտյան Հայաստանի վանքերում հավաքված մյուս ձեռագրերը, մեզ ոչինչ հայտնի չէ):

Մեզ հասած խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի ձեռագրերից հնագույնները՝ դրանք 14-րդ դարի երկու ընդօրինակություններ են, որոնցից մեկը գտնվում է Հայկական ՍՍՌ Մատենադարանում՝ № 2365 (նախկին Գեորգյան № 249), ընդօրինակված 14-րդ դարում և նորոգված 1567 և 1684 թվականներին, մյուսը՝ Վենետիկի Մխիթարյան Մխառանության Մատենադարանի մի ձեռագիրն է, որ ունի ՉՄՐ (1303) թվի գրություն (տե՛ս

«Մովսիսի խորենացույ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1865 թ., Զեկուցումն, էջ 7):

14-րդ դարից ավելի հին ձեռագիր, մինչև այժմ, հայտնի չէ: Ըստ որում, մեզ հասած խորենացու բոլոր ձեռագիր—ընդօրինակությունները բոլորգիր կամ նոսր գրություն ունենւ: (խորենացու ձեռագրի և նրանց մասին մանրամասն տե՛ս «Մովսիսի խորենացու Պատմութիւն Հայոց»ի առաջաբանը, Տիգլիս, 1913 թ.):

Վերջին տարիներս Հայկական ՍՍՌ Մատենադարանի ձեռագրերի թեմատիկ ցուցակը կազմելու ընթացքում, հայտնաբերվել են խորենացու շորս երկաթագիր մագաղաթյա հնագույն պատառիկներ: Նրանք գրանցված են հետևյալ համարների տակ՝ № 1425, № 1221 (պատառիկների թվադարձի) և № 9234:

Նշված պատառիկներից № 1425-ը մեկ թերթ է և պարունակում է Վրաց դարձի պատմությունը Ս. Նունի ձեռքով. այս պատառիկը, ժամանակին, արտագրված և տրամադրված է եղել ակադ. Ստ. Մալխասյանցին, որը և հրատարակել է իր «խորենացու առեղծվածի շուրջը» վերնագրով աշխատության մեջ 1940 թվին (էջ 127): Մեր ուսումնասիրության նյութը, ներկա հոդվածում, հանդիսանալու է № 1221 և № 9234 պատառիկների տեքստը:



Նախ համառոտակի կանգ առնենք պատառիկների արտաքին նկարագրության վրա: Հայկական ՍՍՌ Մատենադարանի № 1221A պատառիկի նյութը մագաղաթ է և ունի բաց դեղին գույն: Երկու կողերը և ներքին եզրը 1—3 սանտիմետր լայնությամբ սևացել են,

հավանական է, յուզի վամ ձեռքի մեջ ընկնելու պատճառով: Ներքին հզոր անհավասար պատառոտված է: Կան մի քանի փոքրիկ ծակոտիներ, որոնք շնն խանգարում տեքստի ընթերցմանը: Վերևից, 1,5 սանտիմետր լայնությամբ, ծալված է, որից երևում է, որ նա ժամանակին օգտագործվել է որպես ձեռագրի պահպանակ: Այդ նկատվում է նաև նրա վրա դրոշմված երկու փոսիկներից, որոնք ձեռագրի կազմի կապերի համար պատրաստած փայտյա փոքրիկ ձողիկների ներսի մասում սեղմած ու թողած հետքերն են: Երկարությունը՝ 20,5 սանտիմետր է, իսկ լայնությունը՝ 15 սանտիմետր: Գիրը՝ ուղղագիծ միջին մեքսիկյան երկաթագիր է: Գրված է երկսյուն: Պատառիկի տեքստը, բացառությամբ մի քանի տողերի և բառերի, վերծանվում է առանց դժվարության: Պատառիկից յոթ տողի շափ, լայնքով, երևի ձեռագրի համար պահպանակ գործածելու ժամանակ, կտրված է: Շուտով մեջքի վրա կան 17-րդ դարի ձեռագրով մի քանի գրչափորձեր, որոնցից մեկը պարզ կարդացվում է՝ «գրչափորձ արարի»: Պատառիկը պարունակում է խորհրդանշանային Պատմության երկրորդ գրքի գլխացանկը:

Հայկական ՍՍԻՒ Մատենադարանի № 1221 B պատառիկը նույնպես մագաղաթ է, ունի մուգ դեղին գույն: Կողերն անհավասար կտրված են, երևում է, որ այս պատառիկը ևս որպես պահպանակ է օգտագործվել: Վերին մասը, 1,5 սանտիմետր լայնությամբ և 5 սանտիմետր երկարությամբ, ծալվածք ունի: Ներքևից երկու տողի շափ կտրված է: Երկարությունը 23 սանտիմետր է, իսկ լայնությունը՝ 14,5: Գրությունը միջին մեքսիկյան ուղղագիծ երկաթագիր է: Գրված է միասյուն: Առաջին երեսի գրերը լավ են պահպանված, իսկ շուտով մեջքի գրերը սրբվել են և մեծ դժվարությամբ հնարավոր եղավ վերծանել պարունակությունը: Ունի մի քանի ծակոտիներ: Մագաղաթի վրա պարզ երևում են սուր գործիքով տողատած գծիկները: Պատառիկի տեքստը պարունակում է խորհրդանշանային Պատմության երկրորդ գրքի գլխացանկի վերջին մասը:

№ 9234 A պատառիկը դեղնագույն մագաղաթ է: Երկարությունը 26 սանտիմետր է, իսկ լայնությունը՝ 18,2: Պատառիկը միջից ծալված է. գործ է ածվել որպես պահպանակ մի հնարավոր գրքի մեջ: Գրված է երկսյուն, միջին մեքսիկյան ուղղագիծ երկաթագիր: Շուտով մեջքի վրա կան 18-րդ դարի գրչափորձեր մի շարք գրչափորձեր: Տեքստը լավ է պահպանված և կարդացվում է առանց դժվարության: Պարունակում է խորհրդանշանային Պատմության Առաջին գրքի երրորդ գլխի՝

«Յաղագս դանիմաստաթի բարուց առաջնոցն մերոց թագաւորաց և իշխանաց» վերջին մասը և հաջորդ՝ չորրորդ գլխի՝ «Յաղագս զի ոչ սակա Աղամայ և ալլոց նահապետացն միաբանեցան ալլքն պատմագրաց» առաջին մասը:

№ 9234 B պատառիկը դարձյալ մագաղաթ է: Երկարություն է 24,8 սանտիմետր, լայնությունը՝ 19,8: Պատառիկը միջից ծալված է. գործ է ածված որպես պահպանակ մի հնարավոր գրքում: Վրան կան գրչափորձեր: Պատառիկը խորհրդանշանային ողբի հատվածներից է: Առաջին երեսի տեքստը լավ է պահպանվել և կարդացվում է առանց դժվարության, իսկ հաջորդ էջը քերվել է և մեծ դժվարությամբ հաջողվեց մեզ վերծանել:

№ 9234 A և B պատառիկները, անվիճելիորեն, միևնույն ձեռագրի մասերն են. գրված են նույն գրչությամբ, ունեն նույն մեծությունը և ալլ նմանություններ, բայց № 1221 A և B պատառիկների միևնույն ձեռագրից ծագած լինելու մասին, դժվար է մեզ վճռական խոսք ասել: Չնայած նրանք երկուսն էլ խորհրդանշանային Պատմության երկրորդ գրքի գլխացանկից են, և քիչ հավանական է թվում, որ տարբեր ձեռագրերից նույն հեղինակի նույն գլխի մագաղաթյա երկու տարբեր ձեռագրերի պատառիկները պատահամբ իրար մոտ գային, սակայն կասկածանք է առաջացնում նրանց գրչության տարբերությունը և մեկի միասյուն, իսկ մյուսի երկսյուն գրված լինելու փաստը:

Համեմատական ուսումնասիրությունը հեշտացնելու համար, նշված չորս պատառիկները անհրաժեշտ ենք համարել համարակալել հետևյալ ձևով. № 1221 A պատառիկի առաջին երեսի առաջին սյունակը՝ 1, նույն էջի երկրորդ սյունակը՝ 2, նույն պատառիկի երկրորդ էջի առաջին սյունակը՝ 3, նույն էջի երկրորդ սյունակը՝ 4, № 1221 B պատառիկի առաջին էջը՝ 5, նույն պատառիկի շուտով մեջքի էջը՝ 6: Այս սկզբունքով էլ համարակալված են № 9234 պատառիկի էջերը և սյունակները: Մեքերոմաների ժամանակ թվարկված պատառիկները իրար հետ շփոթելու համար, անհրաժեշտ ենք համարել № 1221 առաջին պատառիկները հիշել Ա տառանկով, իսկ № 9234 պատառիկները՝ Բ տառանկով:



Ո՞ր դարի գրչություն ունեն վերև բերված պատառիկները—ահա՛ առաջին կարևոր հարցը, որի անսխալ պատասխանը կարևոր է խորհրդանշանային Պատմության հետ կապված մի քանի առեղծվածների լուսաբանության համար: Այս հարցին պատասխանելու համար, մենք հարկադրված ենք դիմել պատառիկներին

տեքստի պաշտոնագրի (հնագրական) ուսումնասիրության, որովհետև պատմականները չունեն հիշատակարան և ոչ էլ կողմնակի որևէ այլ կտման, որի հիման վրա մենք կարողանայինք հեշտությամբ որոշել նրանց գրության ժամանակը:

ա) Երկաթագրի հնագույն գրության բնորոշ առանձնահատկություններից մեկը կայանում է նրանում, որ տեքստերում մի քանի բառեր՝ երեք, չորս, և երբեմն ավելի, գրվում են իրար հետ միացված ձևով: Բառանշատում մը, սովորաբար, կատարվում է նախադասությունը վերջանալուց հետո, իսկ եթե երկար նախադասություն է՝ նրա մի մասը ավարտելուց հետո: Խորենացու Պատմության ներկա պատմականներից № 1221-ի տեքստերը պահպանել են հնագույն գրության հատուկ բառանշատման այդ կարգը, իսկ № 9234-ը ոչ:

բ) Երկաթագրի հնագույն տեքստերում գործ չի ածվում ստորակետը և վերջակետը: Ներկայումս մեզ ծանոթ կետերից հնում գործ է ածվել միայն միջակետը, որը ունեցել է բառանշատմանի ձև և դրվել է ոչ թե տողի վրա, ինչպես այժմ է, այլ տողից վերև: Նա դրվել է ինչպես միջակետի, այնպես և վերջակետի ու ստորակետի փոխարեն: Խորենացու ներկա պատմականների № 1221-ի տեքստերում ևս չկան միջակետ ու ստորակետ, այլ նրանց փոխարինում է միջակետը՝ հնագույն երկաթագրերում գործ ածվող վերև նկարագրված ձևով: № 9234-ի պատմականները ևս պահել են այդ կարգը, բացառությամբ երկու դեպքի, որի ժամանակ գործ է ածվել վերջակետը (Բ, 2—5, Բ, 2—9):

գ) Երկաթագրի հնագույն տեքստերում, բացի տեքստակառույթի բառերից՝ ԱՄ, ՏՐ, ՅՍ, ՔՍ, ՍԲ, ԻՆՂ, ԵՂՄ, չի հապավվում ուրիշ ոչ մի բառ. թվարկված բառերը, փաստորեն, հապավում չեն ուշ միջնադարյան հասկացողությամբ, այլ պատմագրություն (այդ պատճառով էլ հապավման նշանը կոչվում է «պատմի նշան»: Այս մասին ուշադրության արժանի է 12-րդ դարի հեղինակ Արիստակեսի Գրչության արվեստի մասին գրած անտիպ մի աշխատությունը, ուր հեղինակը կանգ է առել նաև պատմագրության վրա (տե՛ս Հայկական ՍՍՌ-Մատենադարան, № 2370, թ. 82 ր): Խորենացու Պատմության պատմականների № 1221-ի տեքստերը ևս պահպանել են հնագույն երկաթագրի այս կարգը: Առաջին երկու պատմականներում հապավված է միայն ՔՍ (Քրիստոս) բառը (Ա, 2—3), իսկ № 9234 պատմականում՝ ՔԻ (Քրիստոսի) (Բ, 1—8, 5—2), Աժայինքն (Աստուածայինքն) (Բ, 1—15), գԻԷՂ (Զիսրայել) (Բ,

6—15): № 9234 պատմականի մի տեղ ունի նաև «թեամբ» վերջավորությամբ մի հապավում՝ «վարդապետութե» (Բ, 8—5), որը, սովորաբար, ակնում է գործ ածվել 11-րդ դարից:

դ) Երկաթագրի հնագույն տեքստերում թե՛ շաղկապը գրված է թե՛ ձևով. այդպես է Լազարյան Ավետարանում և, ընդհանրապես, հնագույն գրչության ունեցող բոլոր տեքստերում: Խորենացու Պատմության չորս պատմականների տեքստերն էլ պահել են ուղղագրական հնագույն այդ ձևը:

ե) Երկաթագրի հնագույն տեքստերում երբե՛ շաղկապը գրվում է երբե՛ ձևով: Նույնն և Խորենացու Պատմության ներկա պատմականները:

զ) Երկաթագրի հնագույն տեքստերում «ըով գրվող շատ բառերի մեջ, «ըին, փոխարինում է «ղ»ն: Այդպես էլ ունեն Խորենացու № 1221 պատմականները՝ Բաւլաց (Ա, 5—4), փոխարեն Բաւլաց, Ղակիւանոս (Ա, 4—16), փոխարեն Լիկիւանոս, Կոստանդնուպոլիս (Ա, 5—19), փոխարեն Կոստանդնուպոլիս: № 9234 պատմականները ևս պահել են «ղ» ի գործածության այդ ձևը՝ այդ (Բ, 3—7, Բ, 5—16, Բ, 6—7) և այլն: Սակայն այս կարգը երկու տեղ խախտվել է. «Ազայէլ» (Բ, 6—13), որը հին ձևում կլիներ «Ազայէլ», Զաւաբաբել (Բ, 6—17), որը հին ձևում կլինի Զաւաբաբէլ:

է) «Բովանդակել» բառը, որ «բաւ» արմատից է, հնագույն ձևագրերում հանդիպում է «բաւանդակել» ուղղագրական ձևով. այդպես էլ ունի № 1221 պատմականներից երկրորդը (Ա, 6—16):

ը) Վերջապես, պատմականների գրության ժամանակը որոշելու խնդրում, կարևոր է պատմականների գրի ձևը: № 1221 պատմականների գրի ձևը ինչպես ասացինք, միջին մեսրոպյան ուղղագրի երկաթագրի է՝ բոլորձե երկաթագրի տառաձևերի որոշ հետքերով: № 9234 պատմականների գիրը դարձյալ ուղղագրի միջին մեսրոպյան գրի տեսակ է, սակայն, բոլորձե երկաթագրերի հետքերը կորցրած: Առաջին գրի տեսակը, սովորաբար, գործ է ածվում 10-րդ դարում, իսկ երկրորդը՝ 11-րդ դարում:

Նշված առանձնահատկություններից ամեն մեկը, առանձին վերցրած, իհարկե, գրության ժամանակը որոշակի սահման գծող փաստ հանդիսանալ չի կարող, որովհետև հաճախ ուշ շրջանի արտագրությունների ժամանակ, գրիչները պահպանում են նախադասարար օրինակի և ուղղագրական, և՛ հնագրական նախկին ձևերը, սակայն, մեր վերև բերված փաստերը, ամբողջությամբ առած, վկայում են պատմականների պատկանելի հնությունը:

նշնելով նշված առանձնահատկություններից, մենք № 1221 պատառիկների ժամանակը որոշում ենք 10-րդ դար, իսկ № 9234 պատառիկներին՝ 11-րդ դարը: Գուցե № 1221 պատառիկների տեքստը, վեր բերված առանձնահատկությունների հիման վրա, հնարավոր լինի տաճիկ և 9-րդ դար, սակայն, նման կասկածանքների դեպքում, նպատակահարմար է համարվում ձեռագիրը ուշ դնել, քան հնացնել:

Խորենացու Պատմության մագաղաթյա ներկա պատառիկները, անվիճելիորեն, աշխարհում մեզ հասած նրա հնագույն ընդօրինակություններն են. նրանք երեք չորս դար ավելի հին են, քան մինչև այժմ մեզ հայտնի նույն հեղինակի ձեռագիր հնագույն ընդօրինակությունները:

№ 1221 պատառիկ

(Առաջին պատառիկ, առաջին էջ, առաջին սյունակ)

- 1 ...ընդ հարկաւ հոռվմայեց-
- 2 տց եւ պատերազմ ընդ զաւրս
- 3 Հերովդի եւ սպանանել զեղ-
- 4 բաւորդի նորա զՅովսէփ.
- 5 Շինուած Եղեսա քաղաքի
- 6 և յիշատակումն սակաւութ
- 7 ազգի մերոյ Լուսաւորչին.
- 8 Յաղագս Երթաւոյն Աբգա-
- 9 ռու յԱրեւելս և թափաւոր-
- 10 եցուցանելոյ Պարսից զԱր-
- 11 (տաղէս) և քե զհարդ կարգե-
- 12 աց զեղբարսն յորոց մեր
- 13 Լուսաւորչին և նորին ազգակ...

(Առաջին պատառիկ, առաջին էջ, երկրորդ սյունակ)

- 1 ...Աբգարու առ Մառինոս
- 2 յորում տեսան զՓրկի-
- 3 չն մեր ՔՍ ուստի եղև սկ-
- 4 իզբն հաւատոց Աբգարու,
- 5
- 6
- 7
- 8
- 9
- 10 Լ. Քարոզութիւն Եղեսայ
- 11 և պատճէն թղթոյն հն-
- 12 գից.
- 13 ԼԱ. Յաղագս վկայութե-
- 14 ան Առաքելոյն (մեր).
- 15 ԼԲ. Վասն Սանտրկոյ թագ-
- 16 աւորութեանն եւ սպան
- 17 ծննդոցն Աբգարու և Հեղ-
- 18 անէ տիկնոջ.

Խորենացու Պատմության պատառիկների մոտավոր ժամանակը որոշելուց հետո, այժմ քննության առնենք պատառիկների տեքստերը ըստ էության, տեսնելու համար այն նմանությունները և տարբերությունները, որ կան այս տեքստերի և հայագիտության մեջ հայտնի Խորենացու ձեռագիր ընդօրինակությունների միջև: Նախ՝ բերենք պատառիկների բովանդակությունը ընդօրինակված հարադատությամբ, համեմատության մեջ դնելով նրանք Խորենացու հրատարակված տեքստի հետ: (Հնում վանկային տողադարձ գոյություն չի ունեցել, այլ տառային. այդպես էլ մենք բերում ենք):

(Տպագիր, էջ 95)

...ընդ հարկաւ Հոռվմայեց-
տց. և պատերազմ ընդ զօրս
Հերովդի, և սպանանել զեղ-
բաւորդի նորա զՅովսէփ:
Իէ. Շինուած Եղեսայ քաղաքի,
և յիշատակումն սակաւութ
ազգի մերոյ Լուսաւորչին:
ԻԸ. Յաղագս երթաւոյն Աբգա-
րու յԱրեւելս և թափաւորե-
ցուցանելոյ Պարսից զԱր-
տաղէս. և քէ զհարդ կարգե-
հաց զեղբարսն, յորոց մեր
Լուսաւորչին և նորին ազգակ...

(Տպագիր, էջ 95—96)

... Աբգարու առ Մառինոս,
յորում տեսին զփրկիչն
մեր Քրիստոս, ուստի եղև սկ-
իզբն հաւատոցն Աբգարու:
(ԼԱ. թուղթ Աբգարու առ Փրկիչ:
ԼԲ. Պատասխանի թղթոյն Աբ-
գարու, զոր գրեաց Թովմաս
առաքեալ հրամանաւ Փր-
կչին):
ԼԳ. Քարոզութիւն Եղեսայ (առա-
քելոյն Թադէոսի) և պատճէն թղթոցն հն-
գից:
ԼԴ. Յաղագս վկայութեան
Առաքելոյն:
Վասն Սանտրկոյ Թագ-
աւորութեանն և սպանման
ծննդոցն Աբգարու, և Հեղ-
ինայ տիկնոջ:

(Առաջին պատահիկ, երկրորդ էջ, առաջին սյունակ)

- 1 ...տրկոյ եւ զերծանել Ար-
- 2 տաշիսի փախստեամբ:
- 3 ԼԲ. Որ ինչ ջան երուանդայ յա-
- 4 դագս ի բուռն առնելոյ զմա-
- 5 նուկն Արտաշէս. եւ բաց թո-
- 6 ղոյ զՄիջագետս:
- 7 ԼԶ. Յաղագս շինուածի երուան-
- 8 դաշատ քաղաքի:
- 9 ԼԷ. (Երբ որպէս շինեաց զԲագարան
- 10 քաղաք կոոց:
- 11 (...) Վասն տնկելոյ զանտառ
- 12 ծննդոց:

(Տպագիր, էջ 96)

...տրկոյ, եւ զերծանել Ար-
տաշիսի փախստեամբ:
ԼԲ. Որ ինչ ջան երուանդայ
վասն ի բուռն արկանելոյ զմա-
նուկն Արտաշէս, եւ ի բաց թո-
ղոյ զՄիջագետս:
ԼԶ. յաղագս շինուածոյ երուան-
դաշատ քաղաքի:
ԼԷ. երբ որպէս շինեաց զԲագարան
քաղաք կոոց:
ԼՄ. Վասն տնկելոյ զանտառն
(որ կոչի) ծննդոց:

(Առաջին պատահիկ, երկրորդ էջ, երկրորդ սյունակ)

- 1 ...տաշիսի երուանդայ եւ գում-
- 2 արելով զգաւս ի պատրա-
- 3 ստութիւն պատերազմի:
- 4 ԽԲ. Եթե որպէս զմուտն Արտ-
- 5 աշիսի իւր աշխարհն յաջ-
- 6 ողեցաւ գործն:
- 7 ԽԳ. Երուանդայ պատերազմ ը-
- 8 նդ Արտաշիսի եւ առումն
- 9 քաղաքին եւ մահ նորին:
- 10 ԽԴ. Թագաւորել Արտաշիսի եւ առ-
- 11 նել բարի իւրոց...

(Տպագիր, էջ 96)

երուանդայ զգաւն Արտաշիսի եւ
գումարելոյ զգաւս ի պատրա-
ստութիւն պատերազմի:
ԽԲ. Եթե որպէս ընդ մուտն Արտ-
աշիսի յիւր աշխարհն յաջ-
ողեցաւ գործն:
ԽԳ. Երուանդայ պատերազմ ը-
նդ Արտաշիսի (եւ փախուստ) եւ առումն
քաղաքին եւ մահ նորին:
ԽԴ. Թագաւորել Արտաշիսի եւ առ-
նել բարի իւրոց...

(Երկրորդ պատահիկ, առաջին էջ)

- 1 ...ի ճեն ազնւոյն Մամգունայ:
- 2 ԶԲ. Նահատակութիւնք Տր-
- 3 դատայ յԱղուանս յորում
4. միջակտուր զԲասլացն ա-
- 5 րար թագաւորն:
- 6 ԶԳ. Յաղագս նոնէի երանելոյ
- 7 եւ քե որպէս եղեն պատճա-
- 8 րք փրկութեան Վրաց:
- 9 ԶԴ. Պարտումն Շապհոյ եւ ակ-
- 10 ամա հնազանդութիւնն ը-
- 11 նդ ձեռամբ մեծին Կոստան-
- 12 տիւնու եւ Տրդատայ ունել
- 13 զԳեքատան եւ զան ազգակա-
- 14 նացն եւ թե յայնժամ եղեւ
- 15 դիւտ փրկական փայտին:
- 16 ԶԵ. Կապումն Ղալիխանոսի եւ
- 17 փախուստ արքունեացն ի Հո-
- 18 ումէ եւ շինել Կոստանդնու-
- 19 նուպոլսի:

(Տպագիր, էջ 99—100)

...ի ճենազնոյն Մամգունայ:
ԶԲ. Նահատակութիւնք Տր-
դատայ (ի պատերազմին որ) յԱղ-
ուանս, յորում
միջակտուր արար զԲասլաց
թագաւորն:
ԶԳ. Վասն նոնէի երանելոյ
երբ որպէս եղեւ պատճա-
րք փրկութեան Վրաց:
ԶԴ. Պարտումն Շապհոյ եւ ակ-
ամայ հնազանդութիւնն ը-
նդ ձեռամբ մեծին Կոստան-
դիանոսի, եւ Տրդատայ ունել
զկերատան, եւ զալ ազգակա-
նացն, եւ քե յայնժամ եղեւ
գիւտ փրկական փայտին:
ԶԵ. Կապումն Ղալիխանոսի, եւ
փախուստ արքունեացն ի Հո-
ւումէ, եւ շինել Կոստանդնու-
պոլսի:

(Երկրորդ պատահիկ, երկրորդ էջ)

- 1 (Յաղագս Արիոս) սի եւ ժողովո
- (յն որ) ժողովեցան ի նի-

(Տպագիր, էջ 100)

ԶԹ. Յաղագս Արիոսի (չարափառի)
եւ ժողովոյն (որ եղեւ վասն նորա) ի

3 (կիայ) եւ սքանչելեացն որ ե-
4 (րեւ) եցաւ ի Գրիգորիոս:
5 Զէ. Դարձ Ար (հստակեայ ի Նիկ-
6 իայ և հաւատալ ազգականացն
7 և որ ինչ ի Գառնի շինուածք:
8 ԶԸ. Յաղագս մահուան Գրիգորի
9 և Արիստակեայ և թէ էր
10 (աղագաւ) կոչի լեառն նմ...

11 ԶԹ. (Յաղ) ագս վախճանին Տրդ-
12 ատայ թագաւորին ընդ որում
13 մ և ողբերգական մեղադ-
14 րութիւն:
15 Բաւանդակեցան ցանկը
16 երկրորդ գրոց միջակ պատմ-
17 ութեան:

Նիկիայ և սքանչելեացն որ ե-
րեկցաւ ի Գրիգորիոս:
Դ. Դարձ Արիստակեայ ի Նիկ-
իոյ, և հաւատալ ազգականացն,
և որ ինչ ի Գառնի շինուածք:
ՂԱ. Յաղագս մահուան Գրիգորի
և Արիստակեայ, և թէ էր
աղագաւ լեառն կոչի նմ...

ՂԲ. Յաղագս վախճանին Տրդ-
ատայ թագաւորին, ընդ որում
և ողբերգական մեղադ-
րութիւն:
Բովանդակեցան ցանկը
երկրորդ գրոց միջակ պատմ-
ուրթեան:

№ 9234 ՊԱՏԱՌԻԿ

(Առաջին պատառիկ, առաջին էջ, առաջին
սյունակ)

1 ...յսկգրան.
2 սկսայց քեպէտ եւ ջ-
3 անիւ միայն թե ոք
4 շնորհակալ իմոյ գտա-
5 նիցի աշխատութեանց.
6 եւ սկսայց յորոց եւ այ-
7 ղքն որք յեկեղեցւոյ.
8 եւ ոյք ըստ քի աւ-
9 ելորդ համարելով զար-
10 տաքնոցն երկրորդել
11 յաղագս սկսբանն ա-
12 ռասպելս. բայց եթե
13 զկինսն զժամանակս
14 ինչ արդեօք եւ զարս
15 յայտնիս որում եւ Ածայ-
16 ինքն ի ճահ գայցեն
17 պատմութիւնք բա-
նից մինչեւ ի հար...

(Տպագիր, էջ 12)

... ի սկիզբն:
(բայց սակայն) սկսայց, քեպէտ և
ջանիւ. միայն թէ
շնորհակալ ոք մերոցս գտա-
նիցի աշխատութեանց:
եւ սկսայց՝ յորոց և այլ-
քքն, որք յեկեղեցւոյ
և ոյք ըստ քիստոսի, աւ-
ելորդ համարելով զար-
տաքնոցն երկրորդել
յաղագս սկսբանն ա-
ռասպելս, բայց եթե
զկինսն՝ ժամանակս
ինչ արդեօք և զարս
յայտնիս, որում և աստուածա-
յինքն ի ճահ գայցեն,
պատմութիւնք բա-
նից. մինչև ի հար...

(Առաջին պատառիկ, առաջին էջ, երկրորդ
սյունակ)


1 ...կան զրուցատրութ-
2 իմն. սակայն եւ ի
3 նոցանէ՝ զոր ինչ
4 հավաստին կարծեմք.
5 առնուլ:
6 Դ. ՅԱՂԱԳՍ ԶԻ ՈՉ ՍԱԿՍ ԱԴԱ-
7 ՄԱՅ ԵՒ ԱՅԴՈՑ ՆԱՀԱՊԵՏԱ-
8 ՅՆ ՄԻԱԲԱՆԻՆ ԱՅԴՔ(Ն) Ի
9 ՊԱՏՄԱԳՐԱՅ:
10 Յաղագս արմատոյն
11 հանուրց մարդկութե-
12 ան. կամ թէ հաճոյ
13 ումեք բուխցի ասել

(տպագիր, էջ 12—13)

...կանսն զրուցատրու-
թիմն սակայն և ի
նոցանէ՝ զոր ինչ
հավաստին կարծեմք,
առնուլ:
Դ. ՅԱՂԱԳՍ ԶԻ ՈՉ ՍԱԿՍ Ա-
ԴԱՄԱՅ ԵՒ ԱՅԴՈՑ ՆԱՀԱՊԵՏԱ-
ՅԸՆ ՄԻԱԲԱՆԵՑԱՆ ԱՅԻՔՆ Ի
ՊԱՏՄԱԳՐԱՅ:
Յաղագս Արմատոյն
հանուր մարդկութե-
ան, կամ թէ հաճոյ
ումեք բուխցի ասել

14 ծայրին. պարտ էր մեզ
15 սակաւ ինչ անցանել
16 բանիւք քե ընդէր
17 հակառակ հոգւոյն...

ծայրին, պարտ էր մեզ
սակաւ ինչ անցանել
բանիւ, քե ընդէր
հակառակ հոգւոյն...



Հայկ. ՍՍԻ Մատենադարանի № 9234 ձեռագրի պահպանակը:

(Առաջին պատառիկ, երկրորդ էջ, երկրորդ սյունակ)

1 ...նոյնպէս եւ վասն
2 նոյի ալլով անուա-
3 մբ վարին. եւ ժամա-
4 նակաւ անբաւիւք.
5 քեպէտ եւ վասն ջր-
6 ոյն սաստկութեան
7 եւ ապականութեան
8 երկրի զոյգ հոգեւո-
9 լացն միաբանին բա-

(Տպագիր, էջ 13)

...նոյնպէս եւ յաղագս
նոյի ալլով անուա-
մբ վարին եւ ժամանակօք
անբաւիւք.
քեպէտ եւ վասն ջր-
ոյն սաստկութեան
եւ (վասն) ապականութեան
երկրի՝ զոյգ հոգեւո-
լացն բարբառին բա-

10 նից. նոյնգոմնակ
11 եւ զթիւ նահապետա-
12 ցն ժ Քսիտրքայի
13 հանդերձ քուէ. որ
14 ոչ միայն ըստ բոլ-
15 որմանս ի յարեգ-
16 ակնէ շորեքժաման-
17 ակեան ըստ մեզ լի-
18 նելոյ տարւոյ հեռա...

նից. նոյնգոմնակ
և զթիւ նահապետա-
ցն տասն՝ Քսիտրքայ
հանդերձ քուէն: Որ
ոչ միայն ըստ բոլ-
որման (առ) յարեգ-
ակնէ շորեքժամանա-
կեան ըստ մեզ լի-
նելոյ տարւոյն՝ հեռա...

(Առաջին պատահիկ, երկրորդ էջ, առաջին սյունակ)

(Տպագիր, էջ 13)

1 ...և զԲազմավիպէն. և
2 զԱբ (և) լինիա. կամ զ-
3 նայն ինքն նաւակառու-
4 ցէն. և զայլոց նահա-
5 պետացն ոչ միայն վա-
6 սն անուանցն եւ ժամա-
7 նակաց. այլ եւ վասն
8 ոչ սկիզբն զառ ի
9 մէջն հաւատարմացե-
10 ակն կարգելոյ ազգիս
11 մարդան. քանզի ա-
12 սէ Աբիւղենոս հան-
13 գոյն այլոցն աշխատ-
14 եւ զնա ամենակալն
15 ԱՄ եցոյց հովիւ եւ ա-
16 ռաջնորդ ժողովրդ-
17 դեանն. յետ որոյ ա-
18 սէ. Թագաւորեաց Ա...

...զԲազմավիպէն և
զԱբիւղենայ. կամ զ-
նուն ինքն նաւակառու-
ցէն և զայլոց նահա-
պետացն. ոչ միայն վա-
սն անուանաց և ժամա-
նակաց, այլ և վասն
մէջն հաւատարմացե-
ակս կարգելոյ ազգի
ոչ սկիզբն զառ ի
մարդկան: Քանզի ա-
սէ (վասն նորա) Աբիւղենոս հան-
գոյն այլոցն աշխատ-
եւ զնա ամենախնամն
Աստուած եցոյց հովիւ եւ ա-
ռաջնորդ ժողովրդ-
դեանն: Յետ որոյ ա-
սէ. Թագաւորեաց Ա...

(Երկրորդ պատահիկ, առաջին էջ, առաջին սյունակ)

(Տպագիր, էջ 359—360)

1 ... (ըն) կերան գործակ-
2 ցաւ. ընդ Քի լաւ էր
3 նոցա բնակել. եւ
4 յԱբրահամեանն
5 հանգչիլ ի գոգս.
6 եւ հրեշտակացն
7 տեսանել զպարա-
8 որութիւնս. բայց
9 անհոգալ դու այ-
10 ռիւքեամբ. և
11 եղկելիք մեր զրկ-
12 եալ ի հայրենի վե-
13 րակացութենէն.
14 Զի ոչ որպէս ի հն-
15 ոմն ժողովուրդն,
16 այլ առավել մեր վա-
17 տաբարութիւնս.
18 վասն զի Մովսէս.
19 բարձեալ լինի նո-
20 ցանէ եւ Յեսու ոչ
21 առաջնորդէ...

ընկերան (և) գործակ-
ցան: Ընդ Քրիստոսի լաւ է
նոցա բնակել և
յԱբրահամեանն,
հանգչել ի գոգս,
և զհրեշտակացն
տեսանել զպարա-
որութիւնս: Բայց
անհոգալ դու այ-
րուքեամբ, և
եղկելիք մեք՝ (որ) զր-
կեալք հմք ի հայրենի
վերակացութենէն:
Զի ոչ որպէս ի հնումն
ժողովուրդն (այն),
այլ առավել մերս է
բշտաբարութիւն:
Վասն զի Մովսէս
բարձեալ լինի,
և Յեսու ոչ
լաջնորդէ...

(Երկրորդ պատանիկ, առաջին էջ, երկրորդ սյունակ)

- 1 ...Ռորոյամ մերժե-
- 2 ցաւ ի մերմէ ժողո-
- 3 վրդենէն. եւ փո(խ)-
- 4 անորդեաց որդին (նա)-
- 5 բառա. եւ զայրն (Այ)
- 6 ծախեաց ոչ առնւ (ծ)
- 7 այլ կատարում (ն)
- 8 ժամանակի.
- 9 (Եղիա համբարձաւ
- 10 եւ Եղիսէ ոչ մնաց
- 11 կրկին, ոգովն
- 12 աւծանել զՅէու
- 13 այլ եւ Ազայել հր-
- 14 աւրեցաւ կոտոր-
- 15 եւ զԻէՂ. Ի գերու-
- 16 թին վարեցաւ սե-
- 17 դեկիա. եւ Զաւա-
- 18 բաբէլ ոչ ուրեք գո-
- 19 յր նորոգէ զպե-
- 20 տութիւնն. Անտիո-
- 21 քոս բռնադատէ...

(Տպագիր, էջ 360)

...Ռորոյամ մերժե-
ցաւ յիւրմէ ժողո-
վրդենէն, եւ փոխա-
նորդեաց որդին նա-
բառա. եւ զայրն
Աստուծոյ ծախեաց ոչ առնւ,
այլ կատարում
ժամանակի:
Եղիա համբարձաւ,
եւ Եղիսէ ոչ մնաց
կրկին, ոգով
օծանել զՅէու,
այլ Ազայէլ հրա-
ւրեցաւ (Ի) կոտո-
րել զԻւրայէլ. Ի գերութիւն
վարեցաւ Սե-
դեկիայ, Զօրա-
բաբել ոչ ուրեք է,
որ նորոգէ զպետու-
թիւնն. Անտիո-
քոս բռնադատէ...

(Երկրորդ պատանիկ, երկրորդ էջ, առաջին սյունակ)

- 1 (Հ)այրենիս. եւ
- 2 (Մ)ատաքիա ոչ ընդ-
- 3 (դ)իմակցէ. պատեր-
- 4 (ա)զմ զմեզ շուրջ
- 5 պաշարեաց. եւ Մակ-
- 6 (աբ)է ոչ փրկէ. այժմ
- 7 մարտք ի ներքուստ.
- 8 արհաւիրք հեթան-
- 9 ոսաց. եւ մարտք
- 10 հերձուածողաց.
- 11 եւ խորհրդական
- 12 չէ ի միջի որ խա-
- 13 տէ եւ յարիւնէ ի
- 14 պատերազմ. Աւաղ
- 15 զրկանացս. աւաղ
- 16 թշուառական պա-
- 17 տմութեանցս.
- 18 որպէս զախտս հան-
- 19 դութեցից բերել.
- 20 զիարդ զիմ միտս
- 21 (ե)ւ զելուս պնդէ...

(Տպագիր, էջ 360)

...հայրենիս, եւ
Մատաքիայ ոչ ընդ-
դիմակայէ. պատեր-
ազմ զմեզ շուրջ
պաշարէ, Մակ-
աբէ ոչ փրկէ: Այժմ
մարտք ի ներքուստ
(ե) արհաւիրք (արտաֆուստ,
արհաւիրք Ի) հեթա-
նոսաց (ե) մարտք (Ի) հերձուա-
ծողաց, խորհրդական
չէ ի միջի, որ խառաւէր
եւ յարմարէր ի
պատերազմ: Աւաղ
զրկանացս, աւաղ
թշուառական պա-
տմութեանցս.
որպէս զախտս հան-
դութեցից բերել.
զիարդ զմիտս իմ
զեզուս պնդէ...

(Երկրորդ պատանիկ, երկրորդ էջ, երկրորդ սյունակ)

- 1 ...զբանն հարցն փո-
- 2 խանակ ծննդեանն
- 3 եւ սննդեանն.
- 4 զի ծնաւ զիս իւրեա-
- 5 նց վարդապետութեամբ

(Տպագիր, էջ 361)

...զբանն հարցն՝ փո-
խանակ ծննդեանն
սննդեանն: Քան
զի ծնաւ զիս իւրեանց
վարդապետութեամբ

6 եւ սնուցին (զիս) առ
7 այլս առաքելով ա-
8 ճեցուցանել. եւ
9 մինչ նոքա զմերն
10 յուսային դարձ.
11 եւ պատուասիրել ի-
12 մով ամենիմաստ,
13 արուեստիւ. եւ
14 կատարելագոյն
15 յարմարութեամբ.
16 Համայն եւ մեք փու-
17 թուպէս դիմեցաք
18 ի Բիւզանդիոն յու-
19 սացեալք հարսան-
20 եաց պարել. անվեհեր
21 երագութեամբ կր...

և սնուցին, առ
այլս առաքելով առ-
ճեցուցանել: Եւ
մինչ նոքա զմերն
յուսային զդարձ.
և պատուասիրել ի-
մով ամենիմաստ
արուեստիւ և
կատարելագոյն
յարմարութեամբ,
համայն և մեք փու-
թուպէս դիմեալք
ի Բիւզանդիոն, յու-
սացաք հարսան-
եաց պարել, անվեհեր
երագութեամբ կր...



Խորենացու պատառիկների տեքստը համեմատելով Խորենացու Պատմության ձեռագրի հայտնի ընդօրինակությունների հետ, գալիս ենք այն եզրակացության, որ № 1221 պատառիկների տեքստերը համապատասխանում են Խորենացու Պատմության քննական հրատարակության մեջ գործ է ածված Ե և Ի ձեռագրերի ընդօրինակության խմբին (առաջինը՝ Հայկ. ՍՍՌ Մատենադարանի № 1459 (4. № 1623) ձեռագիրն է, ընդօրինակված 1691 թվին Ներսես սարկավազի կողմից, իսկ երկրորդը՝ նույն Մատենադարանի № 3385 (Գ. № 602) ձեռագիրը, ընդօրինակված 18-րդ դարի վերջում): Զեռագրերը, ըստ բանասեր Գ. Տ.—Մկրտչյանի Խորենացու ձեռագրերի կատարած ստորաբաժանման, պատկանում են Դ խմբին և հանդիսանում են նրա Ա և Բ ձեռագրերը (տե՛ս Գ. Տ.—Մկրտչյան, «Հայկական», 1894, էջ 81): Իսկ ըստ պրոֆ. Մ. Աբելյանի ստորաբաժանման, նըշված ձեռագրերը պատկանում են առաջին խմբակցության և առաջացել են մեզ չհասած նախնազաղափար օրինակից (տե՛ս «Մովսեսի Խորենացու Պատմություն Հայոց, Տիփլիս, 1913, էջ 16):

Բերենք այն փաստերը, որոնք հիմք են տվել մեզ № 1221 պատառիկների տեքստը վերագրել Ե և Ի ձեռագրերի ընդօրինակությանը:

Ա) Պատառիկների 3—4՝ «Յաղագս ի բուն առնուլոյ» փոխարեն, Խորենացու համեմատական տեքստում օգտագործված բոլոր ձեռագրերն ունեն «Վասն ի բուն արկանելոյ», բացի Ե և Ի ձեռագրերից, որոնք ունեն պատառիկի ձևով (էջ 96, տող 10):

Բ) Պատառիկների 3—2՝ «Պատերազմ ընդ Արտաշեսի» փոխարեն, Խորենացու համեմատական տեքստում օգտագործված բոլոր

ձեռագրերն ունեն «Պատերազմն ընդ Արտաշեսի և փարսուստ», բացի Ե և Ի ձեռագրերից, որոնք ունեն պատառիկի ձևով (էջ 96, տող 26):

Գ) Պատառիկների 5—2՝ «Նահատակութիւնք Տրդատայ յԱղուանս» փոխարեն, Խորենացու համեմատական հրատարակության մեջ օգտագործված բոլոր ձեռագրերն ունեն «Նահատակութիւնք Տրդատայ ի պատերազմին», որ յԱղուանս» բացի Ե և Ի ձեռագրերից, որոնք ունեն պատառիկի ձևով (էջ 99, տող 15):

Դ) Պատառիկների 5—4՝ «միջակտուր չիասղացն արար» փոխարեն, Խորենացու համեմատական տեքստում օգտագործված բոլոր ձեռագրերը տալիս են «միջակտուր արար զԲասղացն» ձևով, բացի Ե և Ի ձեռագրերը, որոնք ունեն պատառիկի ձևով:

Ե) Պատառիկների 5—7՝ «թե որպէս եղեն պատճառք» փոխարեն, Խորենացու համեմատական տեքստում օգտագործված բոլոր ձեռագրերը ունեն «թէ որպէս եղե պատճառք» ձևով, բացի Ե և Ի ձեռագրերից, որոնք ունեն պատառիկի ձևով (էջ 99, տող 17):

Զ) Եվ, վերջապես, պատառիկների տեքստերը, իրենց պարունակած գլուխների թվահամարներով, լիովին համապատասխանում են Ե և Ի ձեռագրերի գլխահամարներին: Պատառիկներում Խորենացու Պատմության երկրորդ գրքի գլխացանկում չկան տպագրի 31-րդ գլուխը՝ «Թուղթ Աբգարու առ Փրկչին» և 32-րդ գլուխը՝ «Պատասխանի թղթոյն Աբգարու, զոր գրեալն թովմաս առաքեալ հրամանա Փրկչին»: Այդ գլուխները չունեն նաև Ե և Ի ձեռագրերը, ինչպես նաև Ա խմբի մյուս բոլոր ձեռագրերը (էջ 95):

Ինչ վերաբերվում է № 9234 պատառիկների տեքստերին, ապա նրանք մոտենում են

ց ձեռագրին՝ Հայկ. ՍՍՌ Մատ. № 1883 (Կարին. № 1621 ձեռագրի ընթերցվածներին) (Հայկ. ՍՍՌ Մատ. № 1883 ձեռագիրը՝ ընդօրինակված է Կարապետ գրչի կողմից Մոկաց Սուրս գյուղում և պատկանում է խառը խմբին)։ Համեմատությունից պարզվեց, որ պատահականորեն տեքստի տասը ընթերցվածներ համապատասխանում են № 1883 ձեռագրի տեքստին։ Կան, իհարկե, տարբերություններ։ Հավանական է, որ պատահականորեն խմբի նախագահարարօրինակի հիման վրա խմբագրված և փոփոխված լինեն խորենացու խառը խմբի ընդօրինակությունները։

Այսպիսով, վերև հիշված պատահականորեն տեքստի համեմատությամբ խորենացու համեմատական հրատարակության մեջ օգտագործված ձեռագրերի ընդօրինակությունների հետ, մենք գալիս ենք, անվիճելի, այն համոզման, որ մեզ հասած խորենացու ձեռագրերից հնագույն ծագում ունեն Ը, Ի և Զ ձեռագրի ընդօրինակությունները։ Համեմայն դեպս, նույն խմբի երկու պատահականորեն խառը խմբի խմբի 10—11-րդ դարից, արդեն մեր ձեռքի տակ են։ Մեր կարծիքով, ամհրաժեշտ է առաջիկայում Ը, Ի և Զ ձեռագրերի ընդօրինակությունը հրատարակել առանձին, առանց խառնելու նրանք համեմատական հրատարակության ձեռագրերի տարբերակների հետ։ Չենք ցանկանում իհարկե, դրանով առանց, որ Ը, Ի և Զ ձեռագրի խմբի ընդօրինակությունները ամենաբավայն ձեռագրերն են։ Ուշ գրված ձեռագրերի մեջ կարող են լինել նույնիսկ 17-րդ դարի ձեռագրեր, որոնք արտագրված լինեն ո՛չ թե 10-րդ դարի, այլ ավելի հին ձեռագրերից, փուլե և այնպիսի ձեռագրերից, որոնց նախագահարարը ծագում է խորենացու ինքնագրից, բայց, առայժմ, այնքան, որքան որ մենք այդպիսի պնդումների համար հիմքեր չունենք, մեզ մնում է հնագույնը և լավագույնը ճանաչել Ը և Ի ձեռագիր— ընդօրինակությունները։



10—11-րդ դարերի պատահականորեն տեքստերը համեմատելով 14—17-րդ դարերի ընդօրինակությունների հիման վրա կազմված խորենացու Պատմության համեմատական տեքստի հետ, կարելի է տեսնել այն փոփոխությունները, որոնք կատարվել են խորենացու Պատմության մեջ 300—400 տարիների ընթացքում։ Այդ մեզ որոշ պատկերում կարող է տալ այն մասին թե ի՞նչ աղավաղված վիճակում է հասել մեզ Պատմահոր աշխատությունը, և որքան անիրավացի են այն բանասերները, որոնք այս կամ այն հատվածի հիման վրա փորձում են խորենացու Պատմության հեղինակին հարցնել։

Մեզ հետաքրքրող առաջին կարևոր հարցը— այդ ընդմիջարկությունների (ինտերպոլացիաների) հարցն է։ Հետագա հեղինակների կողմից չե՞ն գրվել արդյոք առանձին հատվածներ կամ գլուխներ, և իրենց գրվածքին ավելի ժողովրդականություն տալու համար, օգտագործելով Պատմահոր հեղինակությունը, մտցրել նրա պատմության մեջ։ Մեզ, առանձնապես, հետաքրքրում է խորենացու երկրորդ գլխի 83-րդ շարաքատիկ գլուխը՝ առնված Սեղբեստրոսի վարքից, որն այնքան տաք վեճերի տեղի է տվել և այնքան մեծ գրականություն ստեղծել։ Այդ հարցը տեղին է դնել մասնավորապես այժմ, երբ մեր ձեռքի տակ ունենք Պատմահոր Պատմության երկրորդ գրքի գլխացանկի հատվածները 10-րդ դարից։

Պատմահոր երկրորդ գիրքը, ըստ համեմատական հրատարակության բնագրի, բաղկացած է ՂԲ (92) գլուխներից։ Պատահականորեն գլխացանկը երեքով պակաս է. նա ունի ՁԹ (89) գլուխ։ Պատահականորեն վրա շատ պարզ կարդացվում է. «ՁԹ. (3ադ) աղս վախճանին Տրդատայ...», որից հետո՝ գլխի ամփոփումն է. «Բաւանդակեցան ցանկը երկրորդ գրոց Միջակ պատմութեան»։ Ուրեմն, խորենացու երկրորդ գրքի տպագիր գլխացանկում երեք գլուխ նորամուտ են։ Բայց ո՞ր գլուխները։ Այս հարցին ևս մենք, բարեբախտաբար, ի վիճակի ենք պատասխանելու։ Համեմատելով դեպս՝ երկու գլուխների մասին մենք կարող ենք այժմ հաստատապես պատասխանել, իսկ մեկին՝ հավանական ձևով։

Պատահականորեն գլխակարգությունը սկզբից թերի է, ուստի և մենք հարկադրված ենք գլուխների համեմատությունը սկսել ոչ թե սկզբից, այլ միջից։ Տպագրի ԼԳ (33) գլուխը՝ «Քարոզութիւն յնդեսխա...», պատահականորեն գրանցված է Լ (30) թվահամարի տակ, որից կարող ենք եզրակացնել, որ գլուխների նորամուծությունը կատարվել է 33-րդ գլխից առաջ, որովհետև տպագրի 33-րդ գլխից (պատահական 30) մինչև վերջին ՂԲ (92)՝ պատահական ԶԹ (89)՝ գլուխները մնացել են անփոփոխ։

Պատահականորեն գլխացանկում Լ (30) գլխից առաջ գրությունը փոփոխվում է. ըստ տպագրի, այդ գլխին պիտի նախորդեր ԼԱ (31)՝ (Թուղթ Արքայապետ Փրկիչին) և ԼԲ՝ «Պատասխանի թղթոյն Արքայապետ, զոր գրեաց

Թովմաս առաքեալ հրամանաւ փրկչին» գլուխները, սակայն այդ գլուխները չկան: Պատառիկի 1 (30) գլխին նախորդում է «Առաքումն իշխանացն Աբգարու առ Մառի-նոս...»: Այսպիսով, Խորենացու Պատմու-թյան հրատարակութեան մեջ երկրորդ գրքի գլխացանկում հիշված Աբգար քաղապուրի Քրիստոսին ուղարկած նամակը և նրանից ստացած պատասխանը ուշ շրջանի ընդմի-ջարկութիւններ են հանդիսանում:

Ուշադրութեան արժանի է, որ այդ գլուխնե-րը չունեն նաև c և f ձեռագրերը, ինչպես և՛ Ա խմբի պատկանող մյուս ձեռագրերը: Զարմանալ կարելի է, որ Խորենացու համե-մատական հրատարակութիւնը կազմող հե-ղինակները այդ գլուխները պահել են բնա-գրում և չեն իջեցրել տողատակ ծանոթութեան մեջ:

Նորամուծւած այս երկու գլուխները դուրս հանելով Խորենացու Պատմութեան երկրորդ գլխի գլխացանկից, այնուհետև, մնում է մի խորթ գլուխ ևս, որ պիտի փնտռել ի՞նչ (29) գլխից առաջ: Պատառիկի և հրատարակու-թյան համեմատութիւնից պարզվում է, որ այդ խորթ գլուխը պիտի փնտռել տպագրի ի՞նչ (26) գլխից առաջ, որովհետև պատառիկի տեքստը, որ պահվել է այդ գլխից սկսած, հաջորդ բոլոր գլուխներն էլ ունեն, չնայած առաջին գլուխների թվահամարները ջնջվել են:

Այդ խորթ գլխի ատենդովածը լուծելու հա-մար մեզ օգնում են c և f ձեռագրերը: Հայկ. ՍՍՌ Մատենադարանի № 1459 ձեռագրում, (c ձեռագիրը) երկրորդ գրքի գլխահամար-ը գտնվում է՝ թերթ 41բ—44ա: Տպագրի և այս ձեռագրի գլխացանկերը համեմատելու իրար հետ, մենք տեսնում ենք, որ գլխա-ցանկի նշված խորթ գլուխը—տպագրի Բ (8-երորդ) գլուխն է՝ «Երկրորդ լինել թա-գաւորութեան ի զաւակէ Աժդահակայ Մա-րաց թագաւորին», որը չունի ձեռագիրը: Այնքան, որքան այս ձեռագրի ընդօրինակու-թիւնը տառացի համապատասխանում է պատառիկների տեքստերին, մենք բոլոր հիմքերը ունենք հավաստելու № 1459 ձեռա-գրի բնագրին:

Մեզ մնում է պատասխանել մի հարցի ևս. նշված ևրեք գլուխները պակասում են միայն գլխացանկում, թե բուն պատմու-թյան մեջ ևս նրանք չկան: Պատառիկի հի-ման վրա, դժբախտաբար, մենք ի պիճակի չենք պատասխանել այդ հարցին, որովհե-տե մեր ձեռքի տակ չունենք պատմութեան տեքստը, սակայն Հայկ. ՍՍՌ Մատ.ի № 1459 ձեռագիրը ունի այդ գլուխների պատմու-

թիւներ, միայն նրանք առանձին խորագրի տակ չեն գրված, այլ միացված են մյուս գլուխներին:

Ինչ վերաբերում է Խորենացու Պատմու-թյան երկրորդ գրքի 83-րդ գլխին՝ «Յաղագս առնլոյ Տրդատայ կին Աշխեն և Կոստանդնի գՄաքսիմենայ...», պատառիկների հիման վրա ոչինչ ասել չենք կարող, որովհետև նրանք այդ գլուխները չեն ընդգրկում: Ի դեպ, № 1459 ձեռագիրն ունի այդ գլուխը, միայն ոչ թե 83, այլ 2 (80) գլխի տակ:



Խորենացու պատառիկների հիման վրա մենք ի պիճակի ենք Խորենացու Պատմու-թյան հրատարակութեան մեջ մատնացույց անել բնագրային մի շարք աղճատումներ: Կանգ առնենք նրանց կարևորների վրա:

Ուշ շրջանի գրիչները, ինչպես հայտնի է, Խորենացու տեքստը պարզացնելու և իր ժա-մանակի համար ավելի հասկանալի դարձ-նելու նպատակով, տեղ տեղ փոփոխել լրա-ցումներ են կատարել և սրբագրել նախնա-կան տեքստը: Այս կարգի փոփոխութիւն-ներից կարելի է մատնացույց անել հե-տևյալները.

ա) Նախնական բնագրում եղել է՝ «Յա-ղագս Արիոսի և ժողովոյն որ ժողովեցան ի Նիկիայ» (Ա, 6—1): Ուշ շրջանի ուղղարիւղ ընդօրինակողն անհրաժեշտ համարելով Ա-րիոսին հիշել առանց «չարափառ» ածականի, և ցանկանալով ճշտորոշել ժողովի նպա-տակը, վերև բերված պարզերութիւնը սրբա-գրել է հետևյալ ձևով. «Յաղագս Արիոսի չարափառի և ժողովոյն, որ եղե վասն նորա ի Նիկիայ»:

բ) Նախնական բնագրում եղել է՝ «Նահա-տակութիւնք Տրդատայ յԱղուան» (Ա, 5—2): Ընդօրինակող գրիչը ցանկացել է պարզութիւն մտցնել— նշել՝ թե Տրդատը Աղվանքում ի՞նչ քաղաքութիւնում է գործել և վերև բերված նախադասութիւնը սրբա-գրել է հետևյալ ձևով. «Նահատակութիւնք Տրդատայ ի պատերազմին որ յԱղուան»:

գ) Նախնական բնագրում եղել է. «Վասն տնկելոյ զանառ Մենդոց (Ա, 3—12): Ընդ-օրինակող գրիչը անհրաժեշտ է համարել պարզացնել այդ տեքստը, նշելով՝ որ «ծննդոց» այդ անտառի կոչումն է. «Վասն տնկելոյ զանառն, որ կոչի Մենդոց»:

Նման կարգի փոփոխութիւնների շարքը կարելի է ընդարձակել, սակայն, բերված փաստերը, կարծում ենք, բախտաբար են պատկերացնելու այդ կարգի փոփոխու-թիւնների ընդհանուր բնույթը:

Անհամեմատ շատ են ուղղակիորեն փոփոխությունները: 12-րդ դարում կատարված ուղղակիորեն նոր վանդակները մտցնելուց հետո, մշակվելից են նոր կանոններ, որոնց հետևում են հետագա ընդօրինակողները: Համեմատական տեքստը կազմող հեղինակները, դժբախտաբար, հաշվի չեն առել այս, և հին մատենագրերի տեքստերը կազմել են ըստ նոր ուղղակիության՝ բացահայտ շեղվելով նախնական բնագրերից: Կանգ առնենք պատասխանների, ուղղակիության մի քանի փոփոխությունների վրա:

ա) Պատասխանների տեքստում միացյալ «և» շարժարկը ամենուրեք գրվում է եւ ձևով. միացյալ «և»-ը, ինչպես հայտնի է, մեր այբուբենում մտել է 12-րդ դարում:

բ) Պատասխանների տեքստում կլոր «օ»-ին փոխարինում է «առն» զարս (Ա, 1—2, 4—2), եղբարորդի (Ա, 1—3), ժամանակաւ (Բ, 3—3), ածանել (Բ, 6—12), Ջարաբաբել (Բ, 6—17): Կլոր «օ»-ն ևս մեր այբուբենի մեջ մտավ 12-րդ դարում:

գ) Պատասխանների տեքստում քէ շարժարկը գրվում է քե ձևով. (Ա, 1—11, Ա, 5—14, Ա, 6—9, Բ, 1—12, Բ, 2—16), եքէ շարժարկը՝ եքե ձևով (Ա, 3—9, Ա, 4—4, Բ, 1—12), քէպէտ շարժարկը՝ քեպէտ ձևով (Բ, 2—2, Բ 3—5):

դ) Պատասխանների տեքստերում այլ շարժարկը գրվում է այդ ձևով. այդ (Բ, 4—6, Բ, 5—16, Բ, 6—7, Բ, 6—13), այդով (Բ, 3—2), այդքն (Բ, 1—7, Բ, 2—8), այդս (Բ, 8—7), գայդոց (Բ, 4—4), այդոցն (Բ, 4—13):

ե) Պատասխանների տեքստում առիւծ գրական անունը գրված է առեւծ ձևով. (Բ, 1—14), առեւօք մատկարը՝ առեւիք ձևով. (Բ, 1—14):

զ) Պատասխանների տեքստում հատուկ անունների հոլովական ձևում, ա պերջափորության ժամանակ ներքեմն «յ» չի գրվում՝ հրուանդա (Ա, 4—7), Սեքեկիս. (Բ, 6—16) և այլն: Ակամայ մատկարը 1221 պատասխանում գրվել է ակամա ձևով:

Չենք խոսում մյուս տարբերակների մասին, որոնք անչափ շատ են: Նրանք ցույց են տալիս որ Մովսես Խորենացու մեզ հասած Պատմությունը տառն և հիմնը սբարեի ընթացքում ենթարկվել է խմբագրական և այլ կարգի զգալի փոփոխությունների, որի ժամանակ առանձին գլուխներ և հատվածներ ամբողջապես դուրս են հանել, որոշ

գլուխներ և հատվածներ մտցրել են պատմության մեջ՝ հարմարեցնելով իրենց ժամանակի գաղափարական պահանջներին: Այդ ամենը, միաժամանակ ցույց է տալիս Խորենացու տեքստը անքննադատ օգտագործող քանադանների անարդարացի վարմունքը՝ Խորենացուն խալ հանելու գրիչների կատարած փոփոխությունների համար: Ցավալի է նշել, որ Խորենացուն և, ընդհանրապես, հայ հին մատենագրությունը տեղի-անտեղի քննադատող բանասերները, մեծ մասամբ, այն բանասերներին հեն, որոնք քիչ են աշխատել, կամ՝ բոլորովին չեն աշխատել հայկական ձեռագրերի վրա:

Պատասխանների ուսումնասիրությունը մեզ բերում է հետևյալ եզրակացություն.

ա) Հայկական ՍՍՌ Մատենադարանի № 1221 և № 9234 պատասխանները՝ Խորենացու Պատմության մինչև այժմ աշխարհում հայտնի հնագույն ձեռագիր ընդօրինակություններն են, 300—400 տարի ասիի հին, քան Խորենացու Պատմության համեմատական տեքստը կազմող հեղինակներին ծանոթ ձեռագրերը:

բ) № 1221 պատասխանի ընդօրինակությունը համեմատելով Խորենացու Պատմության մեջ օգտագործված ձեռագրերի ընդօրինակությունների հետ, պարզվում է, որ նա պատկանում է Ե և Ի ձեռագրերի խմբին (Հայկ. ՍՍՌ Մատ.ի № 1495 և № 3385 ձեռագրերը), որոնք հնագույն ծագում ունեն և արժանի են հատուկ ուշադրության և պետք է հրատարակվեն առանձին:

գ) Պատասխանների հիմնմաստական ուսումնասիրությունից պարզվում է, որ Պատմահոր Նրկորդ գրքի երեք գլուխները հետագա դարերում մտցված ընդմիջարկություն են հանդիսանում:

դ) Պարզվում է նմանապես, որ Խորենացու Պատմությունը հետագա դարերում ենթարկվել է զգալի փոփոխությունների՝ խմբագրվել է, սրբագրվել, թարգմանվել և աղճատվել անուշադիր ընդօրինակողների կողմից:

ե) Խորենացու ժամանակի հարցը հրատարակված Խորենացու բնագրով որոշող բանասերների կողմից միանգամայն խախտել են և յնև կարող ալլևա բախարարել հայագիտության ներկա պահանջներին: Անհրաժեշտ է նախապես բնագրային լուրջ աշխատանք կատարել՝ պարզել Խորենացու հատագատ բնագրերը:

